ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՏԻԺՆԵՐ
ՊԱՅՄԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ/ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏԵՂԵԿԱՆՔ
Կանխիկ Օգնության, Սննդադրոշմների համար

Օգնությո՞ւն է պետք: Զանգեք ձեր աշխատողին:

- Եթե չուղարկեք մի ամբողջական տեղեկանք, այդ թվում և պատասխանները QR 7/SAWS QR 7-ի բոլոր հարցերի և չկցեք ապացույցները որ խնդրել ենք, ձեր նպաստները կարող են ուշանալ, փոխվել կամ դադարել: **Անհրաժեշտության դեպքում՝ կցեք մի առանձին թերթ:**
- Ձեր տեղեկագրելիք տվյալները կարող են ավելացնել, նվազեցնել կամ դադարեցնել ձեր նպաստները:
- Ձեր լրացված տեղեկանքն ուղարկեք մինչև տեղեկանքի ամսին հաջորդող ամսի 5-ը:

Օրինակներ

Եկամուտ

- Աշխատավարձեր
- Արձակուրդային վճարում
- Երեխայի/կողակցի աջակցթ.
- Ապահովագրական կամ օրինական հաշվեհարդար
- Վարձի եկամուտ կամ վարձի օգնություն
- Որևէ կառավարական նպաստ
- Նահանգային Անկարողության Հատուցում
- Ինքնազբաղում
- Թեյափող կամ ձեռացիր (թիփ)
- Մասնաբաժին կամ շահաբաժին
- Գործադուլի նպաստներ
- Վերադարձված եկամտահարկ
- Գործազրկություն
- Հասարակական Ապահովություն
- Լրացուցիչ Ապահովական Եկամուտ/Նահանգային Լրացուցիչ Վճարում (SSI/SSP)
- Ամսական
- Ոչ-դրամական եկամուտ՝ շահված տուն, անվճար բնակարան/հագուստ/սնունդ/կենցաղսպասարկում
- Բախտախաղի/վիճակաձգության շահույթ
- Կանխիկ, նվեր, փոխառություն, կրթաևպաստ
- Այլ մասնավոր կամ կառավարական անկարողություն կամ կենսաթոշակ
- Աշխատավորի Հատուցում
- Վետերանի կամ Երկաթուղայնի կենսաթոշակ

Ունեցվածք

- Ավտոմեքենաներ
- EBT մնացորդ
- Տուն
- Վճարագիր (Չեքինգ հաշիվ)
- Խնայողական պարտատոմս
- Հող
- Խնայողություն (Սեյվինգ հաշիվ)
- Կյանքի ապահովագրության ապահովագիր
- Խնամագիր (Թրասթ)

Բնակարանի Ծախսեր

- Վարձ
- Կենցաղսպասարկում
- Գրավագիր
- Բնակարանատիրոջ ապահովագրթ.
- Ստացվածքի հարկեր
- Աղբի հավաքման վճարներ

Ծախսեր

- Բժշկական ծախսեր
- Առողջական ապահովագներ
- Երեխայի/խնամառուի Խնամք
- Կոլեջի ուսումնավարձ և պիտույքներ
- Պարտադիր դպրոցական վճարներ
- Երեխայի/կողակցի աջակցություն
- Փոխադրություն
- Սեղյակ և գիշերում
- Բնակարանի ծախսեր

Պատիժներ

ԿԱՆԽԻԿ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՊԱՏԻԺՆԵՐ՝ Եթե դիտմամբ խախտեք Կանխիկ Օգնության կանոնակարգը, ձեր Կանխիկ Օգնությունը կնվազեցվի մի որոշ ժամանակ և ձեզ կտուգանեն $10,000 և/կամ բանտ կուղարկեն կամ կարգելափակեն մինչև 3 տարի:

Ձեր Կանխիկ Օգնությունը կարող է դադարել՝

- Բոլոր տվյալները չտեղեկագրելու կամ սխալ տվյալ տալու համար՝ 6 ամիս առաջին խախտման, 12 ամիս երկրորդի կամ ընդմիշտ՝ երրորդ խախտման դեպքում:
- Նույն ժամանակ մեկից ավելի օգնություն ստանալու նպատակով մեկ կամ ավելի դիմումի համար՝ 2 տարի առաջին դատապարտման, 4 տարի երկրորդի և ընդմիշտ՝ երրորդի դեպքում:
- Օգնություն ստանալու համար խարդախության հանցագործության դատապարտման դեպքում՝ 2 տարի $2,000-ից նվազ գողանալու, 5 տարի $2,000-ից $4,999.99 և ընդմիշտ՝ $5,000 կամ ավելի գողանալու համար:
- Ընդմիշտ՝ վարչաշրջանին բնակության կեղծ ապացույց տալու համար, միաժամանակ երկու կամ ավելի վարչաշրջանից օգնություն ստանալու նպատակով. վարչաշրջանին անպայմանունակ կամ անգո երեխայի մասին սխալ տվյալ տալու համար. խարդախությամբ $10,000-ից ավելի կանխիկ նպաստ ստանալու համար. դատարանից կամ վարչական լսումով խարդախության երրորդ դատապարտում ստանալու համար:

ՍՆՆԴԱԴՐՈՇՄԻ ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՊԱՏԻԺՆԵՐ՝ Եթե դիտմամբ չհետևեք Սննդադրոշմի կանոնակարգին, ձեր Սննդադրոշմը կդադարեցվի 12 ամսով առաջին խախտման, 24 ամսով երկրորդ և ընդմիշտ՝ երրորդ խախտման դեպքում: Ձեզ կտուգանեն մինչև $250,000 տոլարով և/կամ կբանտարկեն/կարգելափակեն 20 տարով:

- **Եթե որևէ դատարան կամ վարչական լսում ձեզ հանցավոր գտնի հետևյալների պատճառով՝**
- Սննդադրոշմները վաճառել կամ փոխանակել եք զենքերի, զինամթերքի կամ պայթուցիկների համար, ձեր Սննդադրոշմները կդադարեցվեն ընդմիշտ առաջին խախտման դեպքում:
- Սննդադրոշմները վաճառել կամ փոխանակել եք թմրանյութերի համար, ձեր Սննդադրոշմները կդադարեցվեն 24 ամսով առաջին և ընդմիշտ՝ երկրորդ խախտման դեպքում:
- Փոխանակել կամ վաճառել եք ավելի քան $500 արժողությամբ Սննդադրոշմներ, ձեր Սննդադրոշմները կդադարեցվեն ընդմիշտ:
- Վարչաշրջանին կեղծ ինքնության կամ բնակարանի տեղեկություն եք տվել, որպեսզի միաժամանակ մեկից ավելի գործի համար Սննդադրոշմ ստանաք, ձեր Սննդադրոշմները կդադարեցվեն 10 տարով: